

Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded
by the European Union
and the Council of Europe



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

**«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական
ռազմավարությունների պատմական քաղաքներում»
(COMUS) ծրագիր**

**Գորիս քաղաքի
Ելակետային պլան**

Մարտ 2017թ.

Բովանդակություն

Ներածություն.....	4
Ծրագրի իրականացման գրասենյակ.....	5
Տեղական շահառուների խումբ.....	6
1. Վերլուծություն.....	7
1.1 Ընդհանուր տեղեկություններ.....	7
1.2 Տարաբնակեցման համակարգ.....	7
1.3 Կապը հարակից տարածքների հետ.....	8
1.4 Ռեսուրսներ.....	9
1.5 Պատմական ակնարկ.....	9
1.6 Բնակչություն.....	10
1.7 Տնտեսություն.....	11
1.8 Հասարակական սպասարկման և սոցիալական ոլորտ.....	11
1.9 Քաղաքաշինական իրավիճակ.....	12
1.10 Պատմամշակութային ժառանգություն.....	12
1.11 Հաղորդակցողիների համակարգ.....	13
1.12 Հանրային տարածքներ.....	13
1.13 Բնապահպանական իրավիճակ.....	14
1.14 Եզրակացություններ.....	14
1.15 Նախադրյալներ.....	14
2. Միջամտության ընդգրկումը.....	15
2.1 SWOT վերլուծություն.....	16
2.2 Բացահայտված հիմնախնդիրները.....	17
2.3 ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ.....	21
2.4 Կարճաժամկետ նպատակներ.....	22
2.5 Երկարաժամկետ նպատակներ.....	22
Համընդհանուր տեսլականի նպատակները.....	22
3. Գործողություններ.....	24
Հավելված 1. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 1.....	28
1.1 Չբոսաշրջային նոր ենթակառուցվածքի կառուցում դեպի Կապան ճանապարհին.....	28
Հավելված 2. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 2.....	30
1.3 Ավանդական ու գեղարվեստական արհեստների վերականգնում.....	30
Հավելված 3. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 3.....	32
1.6 Տեղական ավանդական շինարարական արտադրությունների զարգացում.....	32
Հավելված 4. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 3.....	34
1.10 Նոր զբոսաշրջային հետաքրքրությունների ստեղծում (ՄՊԱ, փառատոներ) զբոսաշրջության սեզոնայնության հաղթահարման համար.....	34
Հավելված 5. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 5.....	36
1.11 Տրանսպորտային միջոցների դիվերսիֆիկացում.....	36
Հավելված 6. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 6.....	38
1.14 Տեղական ավանդույթները ներկայացնող ամենամյա փառատոներ.....	38
Հավելված 7. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 7.....	40
2.1. Քաղաքի կենտրոնական հատվածում գտնվող Նախկին բաղնիքի շենքի վերականգնում.....	40
Հավելված 8. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 8.....	42
2.2. Քրեակատարողական հիմնարկի ապագա օգտագործման գաղափարների վերաբերյալ քայլերի ձեռնարկում.....	42
Հավելված 9. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 9.....	45
2.4 Հանրային տարածքների դերի վերաբժանում ու դրա գործառնությունների զարգացմանը միտված Նախագծերի իրականացում, տարածքների կանաչապատում.....	45
Հավելված 10. Գործիսի ելակետային պլանի գործողություն թիվ 10.....	47

2.5 Փողոցների արդիականացում պատմական կենտրոնում, մասնավորապես կարևորելով մայթերի ու անձրևաջրերի առուների զարգացումն ու պահպանումը	47
Չավելված 11. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 11	49
2.7 Ֆուտբոլի մարզադաշտի շրջակայքի բարեկարգում ու քաղաքային այդ գործառույթի զարգացումը	49
Չավելված 12. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 12	51
2.8 Երկրագիտական թանգարանի վերակառուցում	51
Չավելված 13. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 13	53
2.9 Վերիշեն և Յին Գորիս տարածքներում առկա քարանձավների վերականգնում.....	53
Չավելված 14. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 14	55
2.10 Պատմական կառուցահատման արժեքավոր հատվածներում առկա տարրերի (պատշգամբներ, պատուհաններ) միասնական վերականգնում:	55
Չավելված 15. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 15	57
2.11 Քաղաքի հորհրդային ժառանգության պահպանմանն ու արդիականացմանը նպաստելուն միտված քայլերի իրականացում	57
Չավելված 16. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 16	59
2.12 Քաղաքի 5-րդ ճակատի ուսումնասիրում ու դրա վերականգնմանն ու զարգացմանը միտված քայլերի իրականացում:	59
Չավելված 17. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 17	61
2.13 Ծոփ բներ թաղամասի ուսումնասիրում, հանրահռչակում ու վերականգնում.....	61
Չավելված 18. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 18	63
2.15 Կոմիտասի փողոցի անավարտ շինության կառուցման ավարտ՝ որպես բանկ, խանութ կամ սննդի կետ.....	63
Չավելված 19. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 19	65
2.16 Արդյունաբերական գոտիների վերափոխում այլ ֆունկցիաների	65
Չավելված 20. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 20	68
2.18 Քաղաքի կենտրոնի պատմական հատվածի լուսավորում տվյալ մասին հատուկ լուսային ձևավորման տարրերով	68
Չավելված 21. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 21	70
3.4 Գրիգոր Տաթևվացու հրապարակի վերակենդանացում.....	70
Չավելված 22. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 22	72
3.7 Կանգառների կառուցում.....	72
Չավելված 23. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 23	74
4.1. Քաղաքի բրենդի ստեղծում	74
Չավելված 24. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 24	76
4.4 Քաղաքացիների և շահառուների ներգրավվածություն քաղաքային զարգացման որոշումների կայացման գործընթացում	76
Չավելված 25. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 25	78
4.5 Քաղաքի պատմական իրական արժեքի մասին պատկերացում տվող պատմական միջավայրի ձևավորում և քարոզում.....	78
Չավելված 26. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 26	81
4.10 Քաղաքի համար ամբողջական քարտեզի պատրաստում	81
Չավելված 27. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 27	83
4.12 Ցուցանակների և գովազդային պաստառների վերաբերյալ համակարգված ու համընդհանուր ընդունելի կանոնակարգի մշակում.....	83
Չավելված 28. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 28	85
5.3 Թափոնների տնօրինում	85
Չավելված 29. Գորիսի ելակետային պլանի գործողություն թիվ 29	87
5.4 Կոյուղու համակարգի արդիականացում և գլխավոր կոլեկտորի կառուցում.....	87

Ներածություն

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարությունն պատմական քաղաքներում - COMUS ծրագիրը (այսուհետ՝ COMUS) պաշտոնապես մեկնարկել է 2015թ.-ի հունվարի 1-ին: Եվրոպայի խորհուրդը («քարտուղարությունը») պատասխանատու է նախագծի ընդհանուր կառավարման համար, որը պետք է իրականացվի Համաշխարհային ժառանգության քաղաքներ կազմակերպության հետ համատեղ:

COMUS ծրագիրը կառուցված է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության քաղաքականության գերակայությունների վրա, Արևելյան գործընկերության (2015-2020) ծրագրի համատեքստում՝ միտված Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ համագործակցային գործունեության աշխուժացմանը: Բազմակողմ համագործակցությունը այս տարածաշրջանում զարգանում է 2007թ.-ից ի վեր՝ «Կիևյան նախաձեռնության տարածաշրջանային ծրագրի» շրջանակներում, և, մասնավորապես, պատմական քաղաքների վերականգնման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի «Մշակութային և բնական ժառանգությունը ինտեգրացված պահպանության համար տեխնիկական համագործակցության և խորհրդատվության ծրագրի» իրականացման միջոցով:

COMUS-ի նախաձեռնության ետևում կանգնած սկզբունքները արտացոլում են ողջ Եվրոպայում քաղաքային կառավարման գործընթացների ընդհանուր զարգացումները, հեռանալով ոլորտային քաղաքային զարգացման ավանդական լուծումներից:

COMUS-ի հիմնական նպատակն է խթանել սոցիալական և տնտեսական զարգացումը՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները պատմական քաղաքներում: Նախագիծը հրավիրում է վեց ազգային պետություններից ընտրված պիլոտային քաղաքներին ուսումնասիրել հինգ առանցքային խնդիրներ, որոնք բացում են նոր հնարավորություններ՝ կապվելու Եվրոպական ձգտումների և պահանջների հետ, և որոնք ներառում են ժառանգության պահպանության և կառավարման ավելի լավ ինտեգրում քաղաքային (և տարածաշրջանային) տնտեսական զարգացման քաղաքականություններին՝ միաժամանակ ուղղորդելով պլանավորման, զբոսաշրջության, շրջակա միջավայրի, սոցիալական և այլ քաղաքականությունների ոլորտների միջև փոխազդեցությունը:

Դրանք հետևյալն են.

- ժառանգության կարևորության խթանում,
- ինտեգրացված մոտեցման աջակցում,
- առկա քաղաքային սահմանափակումների ու ճնշումների կառավարում,
- հանրային բանավեճի ներմուծում և բնակիչներին որոշումների կայացման գործընթացում անմիջական մասնակցության ապահովում,
- առկա քաղաքային կառուցվածքի լավագույն օգտագործում՝ խթանելու համար արդիականությունը:

Ծրագրի իրականացման գրասենյակ

Ծրագրի իրականացման գրասենյակը (ԾԻԳ) հանդիսանում է COMUS-ի կառավարման մարմին պիլոտային քաղաքի մակարդակում ծրագրի գործունեությանը աջակցելու համար: Պլանավորման փուլի ընթացքում ԾԻԳ-ն իրականացրել է Ելակետային պլանի մշակման աշխատանքները՝ ուղղորդելով ու համակարգելով այն տեղական մասնագետների հետ (համայնքային հիմնարկներ, վարչություններ, գործնական աշխատողներ, հետաքրքրված խմբեր)՝ քաղաքի Տեղական շահառու խմբերի հետ սերտ փոխշփումների արդյունքում:

ԾԻԳ-ը հանդես է եկել հետևյալ կազմով.

1. Հայարփի Ավանեսյան, ԾԻԳ-ի ղեկավար, Ծրագրի կառավարիչ
Գորիսի զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի գործադիր տնօրեն
Էլ. հասցե՝ hayarpi_avanesyan@hotmail.com
2. Սուսաննա Շահնազարյան, ՏՇԽ համակարգող
«Մամուլի ակումբ» ՀԿ խորհրդի նախագահ
Էլ. հասցե՝ susannashahnazaryan9@gmail.com
3. Նունե Պետրոսյան, Տեղական փորձագետ
Հայնախագիծ ԲԲԸ արվեստանոցի ղեկավար
Էլ. հասցե՝ nunepet@yahoo.com
4. Գոհար Գրիգորյան, Ազգային համակարգող
ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գլխավոր մասնագետ,
COMUS-ի Ազգային համակարգող
Էլ. հասցե՝ ggmincult@gmail.com
5. Սարհատ Պետրոսյան, Ծրագրի ղեկավար
Եվրոպայի խորհուրդ
Էլ. հասցե՝ sarhat.petrosyan@coe.int

Տեղական շահառուների խումբ

Տեղական շահառուների խումբը ստեղծվել է ճրագրի ղեկավարի կարողությունների քարտեզագրման և Ազգային համակարգողի հետ իրականացված հարցումների ու հարցազրույցների միջոցով: Դրանց ամփոփման արդյունքում ձևավորվել է Տեղական շահառուների խումբը (այսուհետ՝ ՏՇԽ), որն իրականացրել է թվով 7 հանդիպում 2015 թ. նոյեմբերից 2016 թ. փետրվարն ից ընկած ժամանակահատվածում:

Գործիսի տեղական շահառուների խմբի անդամներն են.

1. Գարեգին Փարսյան
Գործիսի քաղաքապետարանի Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի պետ, գլխավոր ճարտարապետ
2. Արուս Չայրապետյան
Գործիսի քաղաքապետարանի մշակույթի և սպորտի հարցերով առաջատար մասնագետ
3. Արմինե Իսրայելյան
Չայաստանի զարգացման նախաձեռնություններ (IDeA) հիմնադրամի զբոսաշրջության ծրագրերի ղեկավար
4. Ժիրայր Մարտիրոսյան
Գործիսի քաղաքային պատկերասրահի տնօրեն
ՀՀ նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ
5. Արամ Մուսախանյան
«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
Վերահսկման և գնահատման, կրթական ծրագրերի մասնագետ
6. Արամ Գասպարյան
«Ռի Ռեյզ» ընկերություն գործադիր տնօրեն
7. Արթուր Խոջաբաղյան
«ՕգմենթԱր» ՓԲԸ տնօրեն
8. Տիգրան Բարխուդարյան
«Արդշինբանկ» ՓԲԸ Գործիս մասնաճյուղ կառավարիչ
9. Գայանե Մարտիրոսյան
Միրհավ հյուրանոց գործադիր տնօրեն
10. Շահեն Չեյթունցյան
«Հելի» ՍՊԸ հիմնադիր տնօրեն
11. Նելսոն Միրաքյան
Գործիսի քաղաքապետարանի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի

1. Վերլուծություն

1.1 Ընդհանուր տեղեկություններ

Տեղադրությունը՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք
Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1370մ
Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 240կմ
Բնակչությունը՝ 20,3հազ մարդ
Կլիման՝ բարեխառն լեռնային



Նկ.1. Գորիսի տեղադիրքը Հայաստանի տարաբնակեցման համակարգում

1.2 Տարաբնակեցման համակարգ

Գորիս քաղաքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզն Գորիսի տարածաշրջանում: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սիսիան-Գորիս-Կապան-Մեղրի միջպետական ավտոմայրուղին:


Սյունիքի մարզը հանրապետության առավել սակավ բնակեցված տարածքներից է: Ըստ 2012 թ Վիճակագրական տվյալների, մարզի տարածքում կենտրոնացած էր ՀՀ բնակչության 4.7 %, մինչդեռ մարզի տարածքը կազմում է ՀՀ տարածքի 15.1 %-ը: Բնակչության խտության նման ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում լեռնային տեղանքով և մայրաքաղաքից ու միջազգային Չվարթնոց օդանավակայանից մեծ հեռավորությամբ: Մարզի տարածքում ձևավորված է բնակեցման 2 ձև՝ քաղաքային և գյուղական: Քաղաքային բնակեցման համակարգն ընդգրցում է 7 քաղաքային համայնք, որը կազմում է հանրապետության քաղաքային բնակավայրերի մոտ 15 %-ը, գյուղական բնակեցումն ընդգրկում է 106 գյուղական բնակավայր՝ հանրապետության ողջ գյուղական բնակավայրերի 12 %-ը: Սյունիքի բնակչության մոտ 67.3 %-ը բնակվում է քաղաքային, իսկ 32.7 %-ը՝ գյուղական բնակավայրերում: Մարզային կենտրոնը Կապան քաղաքն է:



Նկ. 2. Սյունիքի մարզի քարտեզը

1.3 Կապը հարակից տարածքների հետ

Տարածաշրջանը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, Գորիսի հարակից տարածքները զարգացել են հիմնականում երևանը Իրանին կապող ճանապարհի և Գորիս գյուղի արևմտյան եզրով՝ Վարարակն գետին զուգահեռ, անցնող առևտրական ճանապարհի խաչմերուկում, որը ճյուղավորվում էր Գորիսը հարավ-արևելքից շրջանցող, Նախիջևան-Ազուլիս-Պարտավ, հայտնի 'ԱՂԻ' առևտրական ճանապարհից դեպի Կասպից ծով, առևտրական ճանապարհով միանալով Մետաքսի ճանապարհին (Նկ.3): Տարածքը նշանակալի զարգացում է ապրել և հայտնի դառել 8-րդ դարում՝ շնորհիվ կրոնական և մշակութային կենտրոն Տաթևի վանքային համալիրի:



Նկ.3. Մետաքսի և համեմունքների ճանապարհը

Միջպետական ճանապարհը ներկայումս անցնում է Գորիս քաղաքի միջով: Քաղաքին կից առկա է օդանավակայան, որը սակայն, ներկայումս չի գործում: Քաղաքը գտնվում է տարածաշրջանի

գյուղական 24 բնակավայրերի բարենպաստ մատչելիության գոտում, մարզի առավել խիստ յուրացված գոտում: Քաղաքում են կենտրոնացած տարածաշրջանային որոշակի գործառույթներ, ներառելով մշակութային հաստատությունները, բուժական և սպասարկման հաստատությունների ստվար մասը:

1.4 Ռեսուրսներ

Ինչպես մարզի, այնպես էլ տարածաշրջանային ռեկրեացիոն ռեսուրսները ներկայացված են անտառներով, կլիմայաբուժության համար բարենպաստ տեղամասերով, պատմամշակութային, հնագիտական հուշարձաններով: Առկա են հանքային ջրերի հանքավայրեր ('Սատանի կամուրջ'-ի մոտ)՝ բալնեոլոգիական նպատակներով օգտագործելու համար:

Տարածաշրջանը հարուստ է ինչպես պատմության և մշակույթի ու բնական հուշարձանների առկայությամբ, այնպես էլ բուժական և առողջարարական ռեսուրսներով:

Բալնեոլոգիական նշանակության հանքային ջրերի ելքեր կան Գորիս քաղաքի շրջակայքում: Այսպիսով, կլիմայաբուժության բարենպաստ պայմանները, հարուստ պատմամշակութային հուշարձանների, հանքային ջրերի առկայությունը՝ համատեղված բնակլիմայական եզակի պայմանների հետ, ակտիվ գործոններ են Գորիս քաղաքը դարձնելու բազմաֆունկցիոնալ ռեկրեացիոն կենտրոն, բարձրացնելու քաղաքի և նրա կենտրոնի սոցիալական ակտիվության դերը, ինչը խթան կհանդիսանա ինչպես հենց քաղաքի, այնպես էլ վերջինիս բարենպաստ մատչելիության գոտում տեղակայված բնակավայրերի տնտեսական զարգացման համար: Գորիսի տրանսպորտային բարենպաստ մատչելիության արեալում (որն ընդգրկում է ամբողջ Գորիսի տարածաշրջանը) նախատեսվում է Որոտան գետի ավազանի ռեկրեացիոն գոտու՝ Գորիսի ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպում:

1.5 Պատմական ակնարկ


Գորիս անվան հնագույն հիշատակումը գալիս է ուրարտական ժամանակաշրջանից: Ռուսա Ա թագավորը մ.թ.ա. 8-րդ դարում թողել է սեպագիր արձանագրություն, ուր իր նվաճած 23 երկրների մեջ նշում է Գուրիայա երկիրը: Գիտնականները գտնում են, որ դա Գորիսն է: Գորիսում գտնվել է Նան Արտաշես Ա թագավորի (մ.թ.ա. 189-մ.թ.ա. 160) արամեերեն արձանագրության սահմանաքար:

Մարդն այստեղ բնակություն է հաստատել դեռևս քարեդարյան շրջանում: Այն պատմական աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից: (Նկ. 4). Քաղաքային տարածքին ինքնատիպություն է տալիս քաղաքը շրջափակող ասիմետրիկ լանդշաֆտը, որը և բնական ձևերով հստակ սահմանազատում է քաղաքային տարածքը: Քաղաքը հյուսիսից սահմանափակվում է սարահարթով, որի եզրերը դեպի քաղաք են իջնում խորը հեղեղատներով և ձորերով, արևելքից շրջափակվում է հողմահարված տուֆաավազաքարերից առաջացած զարմանահիրաշ ձևերով (բուրգերով, սյուներով):



Նկ.4. քարանձավային Գորիս գյուղ և հարթավայրային Գորիս


19-րդ դարից սկսած քաղաքն արագորեն զարգացում է ապրում և ընդլայնվում գետի աջ ափին (նկ.5):




Նկ.5. քաղաքային տարածքի զարգացման փուլերը

1.6 Բնակչություն

Բնակչության աճի դինամիկան՝ 1870-2015 թ.թ. կտրվածքով ներկայացվում է ստորև դիագրամում.



Բնակչության սեռատարիքային կազմի վերլուծությունը (ըստ վիճ.վարչության տվյալների) ներկայացնում է հետևյալ պատկերը՝ տղամարդկանց և կանաց հարաբերակցությունը քաղաքում կազմում է 49 % և 51 %: Տարիքային կազմը հետևյալն է.



1.7 Տնտեսություն

Քաղաքի տնտեսությունը ձևավորվել է 20-րդ դարի կեսերին՝ քաղաքի հարավային հատվածում ձևավորված արդյունաբերական հանգույցի շրջանակներում: 1948 թ. հիմնադրվել է Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկան, 1960 – 1970 թթ. Գորիսը հարստացել է արդյունաբերական մի շարք այլ ձեռնարկություններով: Գործարկվել են միկրոէլեկտրաշարժիչ, ավտովերանորոգման, ծխախոտի ֆերմենտացիոն, ռետինե կոշիկների, հացի գործարանները, արդյունաբերական և կենցաղային սպասարկման կոմբինատները, գորգագործական արտելը, որոնց արդյունաբերական արտադրանքի զգալի մասն արտահանվել է: Ներկայումս քաղաքի արդյունաբերական համալիրը (Էլեկտրատեխնիկական, թեև, սննդի, տեղական արդյունաբերական ճյուղերով) փլուզվել է: Գործում են մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ ('Միկրոշարժիչ գործարան' ՓԲԸ, 'Տրիկոտաժի ֆաբրիկա' ՓԲԸ, 'Չանգեզուր կոմբինատ' ՓԲԸ, 'Որոտանի ՅԷԿ' ՓԲԸ, 'Գամմա' գործարանը, Սննդի կոմբինատը, 'Յացի գործարան' ՓԲԸ և այլն):

1.8 Հասարակական սպասարկման և սոցիալական ոլորտ

Քաղաքում գործում են 6 միջնակարգ, 1 հատուկ գիշերօթիկ, 1 երաժշտական, 1 նկարչական, 1 մարզական դպրոց, 7 մսուր – մանկապարտեզ, գյուղատնտեսական տեխնիկում, 1 մանկավարժական, 1 մասնագիտական հաստատություն, Գորիսի պետական համալսարանը, 2 առողջապահական հաստատություն (հիվանդանոց), 2 պոլիկլինիկա, 2 մշակույթի պալատ, 1 ակումբ, 3 գրադարան, պետական թատրոն, 2 թանգարան՝ Ակսել Բակունցի տուն – թանգարանը և Չանգեզուրի հայրենագիտական թանգարանը, Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի մասնաճյուղը, պատկերասրահ, մարզադաշտ, հյուրանոցներ և հյուրատներ, տպարան, հասարակական և վարչական գործառնություններով կառուցապատում: Պատմական կենտրոնի հատվածում պահուստային տարածքները գրեթե բացակայում են, հետագա զարգացման համար առկա է պատմական կենտրոնի լքված կամ անավարտ կառույցների վերածոցագործում՝ նոր գործառնությունների վերագրմամբ:

Զբոսաշրջության զարգացման հետ քաղաքում նկատելի է հյուրանոցային ծառայությունների զարգացում՝ թե՛ հյուրանոցների և թե՛ հյուրատների ընդլայնված և այցելուների տարբեր խավերի պահանջների բավարարման մակարդակի ցանցով:

Առևտրի և սննդի հաստատությունների ցանցը ներկայացված է խառը կառուցապատման ձևով՝ քաղաքի թե՛ կենտրոնական՝ պատմական, և թե՛ նորակառույց հատվածներում նման օբյեկտների ցրված տեղաբաշխմամբ:

1.9 Քաղաքաշինական իրավիճակ

Գորիս քաղաքի պատմականորեն ձևավորված գծային հատակագծային կառուցվածքը պայմանավորված է տարածքի տեղադրվածությամբ Վարարակ (Գորիս) գետի ողողահունում: Քաղաքի հիմնական կենտրոնական մասի հատակագծային կառուցվածքի հիմքն է հանդիսանում ուղղանկյան փողոցային ցանցը, որը բաժանում է քաղաքային տարածքը քառակուսի և ուղղանկյուն բնակելի թաղամասերի, հասարակական կենտրոնի, և XIX-XX դարի 1-2 հարկանի պատմական-ճարտարապետական արժեք ներկայացնող 'շարքային' կառուցապատումը:

1960-ական թվականներից քաղաքի կենտրոնական մասում կառուցվում են չորսից հինգ հարկանի տներ: Նորակառուցները հիմնականում կառուցվում են Արթիկի վարդագույն տուֆից, որն իր հերթին խախտում է ամբողջապես տեղական բազալտից կառուցված քաղաքի ներդաշնակ գունային գամման:

Թե՛ նշված ժամանակահատվածում, և թե՛ ներկայումս քանդվում կամ ձևափոխումների են ենթարկվում քաղաքի կենտրոնական մասում գտնվող բազմաթիվ արժեքավոր ճարտարապետական կառույցներ, որոնց տեղում, առանց հաշվի առնելու արդեն ձևատեղծված քաղաքաշինական միջավայրի տարածական առանձնահատկությունները, կառուցվում են գրեթե ճարտարապետական արժեք չունեցող, շրջապատող միջավայրին անմասշտաբ և անհարիր տներ:

Ամբողջովին աղավաղվել է Կոմիտասի (Նախկին՝ Կարապետյան) փողոցից հարավ ու Սյունիքի փողոցից արևելք ընկած հատվածը, Հին Գորիսի Վարարակն գետին հարող տարածքը: Մասնակիորեն աղավաղվել են Մ. Մաշտոցի և Անկախության փողոցների, Չորավար Անդրանիկի ու Գուսան Աշոտի փողոցներով սահմանափակված տարածքը, Մովսես Խորենացու փողոցի Գուսան Աշոտի փողոցի հետ հատման կետից հարյուր մետր հյուսիս և յոթանասուն մետր հարավ ընդգրկող տարածքը, Օրբելյան փողոցից արևելք, իսկ Գուսան Աշոտի փողոցից հյուսիս ընկած տարածքը և վերջինիս Մակիչի փողոցից արևելք ընկած տարածքը: Պատմական քաղաքի մնացած տարածքը չի աղավաղվել: Այստեղ պահպանվել է քաղաքի պատմական կերպարը:

Կառուցված լինելով կանոնավոր Նախագծի հիման վրա, քաղաքն ունի հստակ հատակագծային կառուցվածք, հանրային տարածքների՝ մասնավորապես մասնագիտացված (վարչական, առևտրային, արհեստագործական, շուկայական, թատերական) հրապարակների, ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների (քաղաքային և հաղթանակի զբոսայգիներ), սպորտային գոտու որոշակիորեն ձևավորված հատակագծային տեղաբաշխում:

Քաղաքի պատմական կենտրոնի հատվածը ներկայացված է հիմնականում բնակելի սակավահարկ տների՝ թաղամասերի պարագծային կառուցապատմամբ՝ կառույցների ճակատային հատվածներով դեպի փողոց ուղղված: Կառույցները դրված են փողոցների կարմիր գծով, ունեն բարձրարժեք դեկորատիվ Նախագարդմամբ փայտե շքապատշգամբներ: Առկա են նաև բազմաբնակարան կառույցներ թե՛ պատմական կենտրոնի շրջանակներում, և թե՛ ձևավորված քաղաքի հյուսիսային՝ Վանքի տափ և հարավային միասնական թաղամասերի տեսքով:

Պատմական կենտրոնին հարող հատվածում է տեղակայված նաև արտադրական գոտին:

1.10 Պատմամշակութային ժառանգություն¹

Քաղաքի ամենաբնորոշ պատմամշակութային արժեք ներկայացնող միջավայրը բնակելի տներով կառուցապատված փողոցներն են: Դրանք իրենցից ներկայացնում են կամարակապ դարպասներ ունեցող պարսպապատերով միմյանց միացված, հիմնականում երկու հարկանի (երբեմն նաև մեկ) Գորիսյան ինքնատիպ բնակելի տների շարք: Ցածրահարկ, ոչ խիտ կառուցապատմամբ Նոր Գորիսը կոմպոզիցիոն սերտ փոխկապվածության մեջ է բնական բարդ տեղանքում ավանդական սկզբունքներով կառուցապատված Հին Գորիսի հետ: Նոր Գորիսը տարածական ու ոճական իմաստով մի ամբողջական օրգանիզմ է, որի առանձին կառույցներ միմյանց և շրջապատող բնության հետ խիստ ներդաշնակության մեջ է: Այն խիստ արտահայտված տարածական ակցենտներ չունի:

¹ Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման Նախագիծ և քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման և օգտագործման հայեցակարգ, ՀՀ կառավարության 31.05.2012 թ նիստի թիվ 211 արձանագրություն

Թե՛ Գորիս գյուղում, և թե՛ քաղաքի պատմական մասում հաշվառված են բազմաթիվ ու տարաբնույթ (բնակելի տներ ու առևտրական-հասարակական կառույցներ, ձիթհաններ, բրուտանոցներ, ջրաղացներ, Ձագեձորի բերդը և այլն) պատմամշակութային հուշարձաններ՝ հանրապետական ու տեղական նշանակության, որոնք ձևավորում են քաղաքի պատմամշակութային արժեքը և անգամ վերակառուցումների ընթացքում թույլ տրված սխալներից հետո էլ պահպանում Գորիս քաղաքի արժեքը՝ որպես հանրապետության ամենահետաքրքիր և ճարտարապետագեղարվեստական տեսակետից մեծ արժեք ներկայացնող և թե տեղական և թե արտասահմանյան այցելուների համար մեծ գրավչությամբ օժտված քաղաքներից մեկը:

Համաձայն Հայաստանի հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկի քաղաքի ողջ տարածքում հաշվառված է 157 անուն հուշարձան՝ բաղկացած 277 միավորից: Դրանցից 127-ը հանրապետական նշանակության են: Հուշարձանների շուրջ սահմանված են 46 պահպանական գոտի:

1.11 Հաղորդակցուղիների համակարգ

Գորիս քաղաքը հանրապետության մյուս քաղաքների հետ կապված է ավտոմոբիլային ճանապարհներով: Քաղաքի ողջ երկարությամբ անցնում է Մ-2 միջպետական նշանակության երևան-Երասխ-Գորիս-Մեղրի ճանապարհը: Քաղաքի սահմաններում այն կոչվում է Սյունիքի փողոց: Քաղաքի հյուսիսային մասում Մ-2-ից ճյուղավորվում է Մ-12 Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը:

Քաղաքի տնտեսական զարգացման պոտենցիալ ոլորտներն են զբոսաշրջությունը և գիտատար ու ստեղծարար արդյունաբերությունը, ինչը ենթադրում է հաղորդակցուղիների զարգացած ու արդյունավետ ցանցի ապահովում:

Այն ենթադրում է նաև ներքին փողոցային ցանցի բարելավում ու հարմարեցումը ժամանակակից պահանջներին: Առանցքային փողոցները նախագծվել են 24 մ լայնությամբ, իսկ մնացածները 17 մ: 24 մետրանոց փողոցները թողունակության առումով բավարարում են թե՛ տրանսպորտային միջոցների շարժմանը, և թե՛ լայնական կտրվածքում հետիոտնի համար նախատեսված ուղիների շրջանակում՝ հետիոտն շարժման կազմակերպմանը: Այնուհանդերձ, որակական և արդի պահանջների ներկայացված պահանջների առումով այն կարիք ունի թե վերակազմավորման և թե արդիականացման՝ լայնական կտրվածքի և ծածկույթի: Հետիոտնի համար նախատեսված հատվածները զբաղեցված են այլ գործառույթներով, կազմակերպված հեծանվային շավիղները բացակայում են, պաշտպանիչ ծառատնկումների որոշակի մասը հեռացված է, մյուսների մեջ առկա են ծերացած ծառեր: Հանրային հավաքատեղիների մոտ բացակայում են կազմակերպված ավտոկայանատեղերը:

Քաղաքին ուրույն տեսք տվող և մայթերի երկարությամբ ձգվող բաց ջրահեռացման առուների համակարգը գտնվում է մաշվածության բարձր աստիճանում, միևնույն ժամանակ խոչընդոտ է հանդիսանում բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժն իրականացնելու գործընթացում:

Քաղաքում գործում են հանրային տրանսպորտի կազմակերպված 4 երթուղի՝ միկրոավտոբուսների և ավտոբուսի ներառմամբ: Սակայն, չկան դրանց համար կազմակերպված կայանման կանազաններ:

Քաղաքի գրավչության խնդրում մեծ դեր ունեցող Գորիս պատմական գյուղ ուղղորդող հետիոտն ճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում, չունի պատշաճ նշանակություն ու արժևորում:

Քաղաքի պատմամշակութային արժեքին համազոր փողոցային կահավորանքի տարրերը բացակայում են:

1.12 Հանրային տարածքներ

Քաղաքը՝ ներմշակութային արժեքին համապատասխան առկա են մասնագիտացված (վարչական, առևտրային, արհեստագործական, շուկայական, թատերական) հրապարակներ, ընդհանուր օգտագործման կանաչ գոտիներ (քաղաքային և հաղթանակի զբոսայգիներ), սպորտային գոտու որոշակիորեն ձևավորված հատակագծային տեղաբաշխում: Այնուհանդերձ, թե՛

դրանց տեղաբաշխվածությունը, և թե՛ փոխադարձ ֆունկցիոնալ հատակագծային անընդմեջ կապերի բացակայությունը, չի նպաստել կանոնավոր նախագծի հիման վրա ձևավորված ֆունկցիոնալ գոտիների միասնական համակարգ ձևավորելու հնարավորությունը: Միասնականությունը, թերևս լավագույնս կապահովվեր մայթերի և հետիոտն ճեմուղիների առևտրային փողոցների կանոնակարգված համակարգի միջոցով, որի պոտենցիալ հնարավորությունները թեև առկա են, սակայն միասնական նախագծային լուծումների բացակայությունը չի նպաստում դրա իրականացմանը: Ինչպես նաև դրանք հարմարեցված չեն բնակչության սակավաշարժուն խմբերի մատչելիությանը:

1.13 Բնապահպանական իրավիճակ

Ներկայումս քաղաքում բնապահպանական իրավիճակը բարենպաստ է մթնոլորտային օդի առումով, քանի որ քաղաքում բացակայում են արտանետումներով արտադրական օբյեկտները: Որոշակի աղտոտվածություն խնդիր առկա է հողերի վերաբերյալ՝ կապված անկանոն աղբահանության և աղբավայրի՝ գործող Նորմերիի պահանջներին անհամապատասխանության հետ: Առկա է նաև Վարարակն գետի հունի աղտոտման վտանգ՝ կապված չարտոնված աղբակուտակումների հետ գետափնյա և գետահունի հատվածներում, ինչպես նաև հիմնական կոլեկտորի և մաքրման կայանի բացակայության պատճառով՝ կոյուղաջրերի գետը թափվելու պարագայի հետ:

1.14 Եզրակացություններ

Հանրագումարի բերելով տարածաշրջանային ռեսուրսները, համայնքի դերն ու դիրքը, վերլուծության արդյունքները՝ ստորև ներկայացվում են ընդհանրացված նախադրյալները.

1.15 Նախադրյալներ

- գրեթե հավասարազոր մատչելիությունը տարածաշրջանի պատմամշակութային արժեք ներկայացնող լքված բնակավայրերից (տարածաշրջանային երթուղիների կազմակերպման նախադրյալ) ,
- տեղադրվածությունը ռեկրեացիոն ռեսուրսների կենտրոնացման վայրում և մարզի գրեթե աշխարհագրական կենտրոնում,
- հարուստ մշակութային ավանդույթներ (փառատոների, տոնակատարությունների կազմակերպման նախադրյալներ) ,
- մարզի մշակութային ներուժի կենտրոնացումը Գորիսում (բարձրագույն ուսումնական հաստատությունների առկայություն) ,
- արհեստագործական հարուստ ժառանգություն և ավանդույթներ (մետաղամշակում, արծաթագործություն, գորգագործություն, ոսկերչություն, շինարարական արվեստ) ,
- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքներով ապահովվածություն
- պատմական արժեք ներկայացնող տեղամասերի առկայություն,
- պատմամշակութային հուշարձանների առկայություն,
- քաղաքում պատմական արժեքավոր կառուցապատման առկայություն,
- բարենպաստ մատչելիությունը հարակից բնակավայրերից՝ միասնական տարածաշրջանային գոտու ձևավորման գործընթացում,
- հարակից գյուղական բնակավայրերի հարուստ ներուժ:²


² ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին 19.01.2006 № 39-Ն որոշում և Գորիս քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակում 2015

2. Միջամտության ընդգրկումը

Վերլուծության արդյունքների հիման վրա արված եզրահանգումները ձևավորեցին հստակ գաղափար, այն է՝ ժառանգության պահպանությունը և զարգացումը խաղում են կենտրոնական դեր՝ Գորիս քաղաքում հավասարակշռված, ամբողջական և կայուն քաղաքային ապագա (ընդհանուր տեսլական) ունենալու համար: Ուստի, միջամտությունը կընդգրկի վերլուծության յուրաքանչյուր բաժնի արդիականացմանն ուղղված միջոցառումների համալիրը՝ բարեկարգելու թե պատմամշակութային ժառանգության, քաղաքային կառուցվածքի և թե բնական լանդշաֆտի առանձին տարրերը, որոնց հաջորդական իրականացումը կհանգեցնի ամբողջական քաղաքային կայուն միջավայրի ձևավորմանը:

Պատմամշակութային ժառանգության պահպանման և արդյունավետ վերածագործման գործընթացի համակարգված իրականացումն ապահովելուն միտված հարկ է մշակել հանձնարարականներ, որոնցով կտրվի նաև առանձին կառուցների (պատմական արժեքավոր՝ մշակութային տաբեր աստիճանի) հետագա կենսունակությունն ապահովելու համար անհրաժեշտ միջամտությունների անհրաժեշտ շրջանակը՝ գործառնությունների իրականացման գործընթացում բացառելով արժեքավոր կառույցի վերակառուցումը՝ նոր հավելումները, արտաքին փոփոխությունները, որոնք կհանգեցնեն այդ պատմական արժեքի ոչնչացմանը:

Նոր կառուցապատումներ իրականացնելիս դրանք պետք է ներդաշնակեն գոյություն ունեցողին թե չափերով, համաչափությամբ, և թե ճարտարապետական առանձնահատկություններով՝ պահպանելու պատմական արժեքավոր միջավայրի ամբողջականությունը:



Նկ.6. քաղաքի պատմական միջուկը, պահպանական գոտիների համակարգը

Միջամտությունների տարածական ընդգրկումը զետեղված է Հին Գորիս՝ պատմամշակութային արգելոցի հետևյալիս՝ պատմամշակույթում է Դավիթ Բեկի և Սյունիքի փողոցների հատման կետից, անցնում է Սյունիքի փողոցով մինչև Չորավար Անդրանիկի փողոցի հետ հատման կետը, շարունակվում է Չորավար Անդրանիկի փողոցով մինչև Մովսես Խորենացու փողոցի հետ հատման կետը, այնուհետև անցնում է Մովսես Խորենացու փողոցով 540 մ դեպի հարավ և այդ կետից շարունակվում է 450 մ արևելք՝ զուգահեռ Գրիգոր Տաթևացու փողոցին, նրանից 50 մ հեռավորությամբ, ապա շարունակվում հարավ՝ զուգահեռ Մ. Մաշտոցի պողոտային, նրանից 60 մ հեռավորությամբ, այնուհետև ընդգրկում է Հին Գորիսի պատմական տարածքը: Տվյալ լուծումը կապահովի պատմական ամբողջական միջավայրի վերակենդանացում կոմպակտ տարածքի վրա, ինչն առավել նկատելի կդարձնի միջամտության բոլոր տարրերի ներառմամբ փոխկապակցված քաղաքին միջավայրի ընկալումը և դրա ազդեցությունը քաղաքի զբոսաշրջային, տնտեսական զարգացման, կրթական համակարգի ու ենթակառուցվածքների կատարելագործման վրա:

2.1 SWOT վերլուծություն

SWOT վերլուծության արդյունքները դրվել են ռազմավարական պլանավորման հիմքում: Այն է տեղական շահառուների խմբի կողմից, ներկայացնելով, փոխանակելով և զարգացնելով զարգացման գործոններին առնչվող առաջադրված գաղափարները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ▪ Մեծ թվով բնական ու տեխնածին հուշարձաններ համայնքի սահմաններում և հարակից շրջաններում ▪ Հարուստ նյութական և ոչ նյութական ժառանգություն ▪ Ռազմավարական աշխարհագրական դիրք՝ որպես տրանսպորտային հանգույց ▪ Բարենպաստ կլիմայական պայմաններ ▪ Բազմաթիվ հյուրանոցների ու հյուրատների առկայություն ▪ Գոյություն ունեցող տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ցանցի առկայություն 	<ul style="list-style-type: none"> ▪ Սակավ բյուջետային միջոցներ ▪ Չբոսաշրջության սեզոնայնություն ▪ Մշակութային ու պատմական ժառանգության ներկայացման անկարողություն ▪ Չբոսաշրջությանը սպասարկող ծառայությունների պակաս ▪ Բրենդինգի և գովազդի անհրաժեշտություն ▪ Աղբահանություն ▪ Մաքրման կայանի բացակայություն ▪ Հանրային տարածքների ցածր որակ ▪ պատմական կենտրոնի զարգացմանը նպաստող օբյեկտների և ծառայությունների բացակայությունը ▪ քաղաքային միջավայրի կահավորանքի և դիզայնի տարրերի բացակայություն ▪ Տեղական արտադրությունների պակաս ▪ Բնապահպանական վիճակի ցածր մակարդակ
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> ▪ Տարածաշրջանային ու միջազգային զբոսաշրջային կենտրոն դառնալու ներուժ 	<ul style="list-style-type: none"> ▪ Աղբահանություն, աղբամշակման բացակայություն ▪ Քաղաքային կանոնակարգի բացակայություն

<ul style="list-style-type: none"> ▪ Հանրային տարածքների բարեկարգում, հանգստի գոտիների կառուցում, մասնավորապես, քաղաքի կենտրոնական հետադյունաբերական գոտում ▪ Էկո-արտադրանքի արտադրություն ▪ Տարբեր միջազգային ծրագրերի մասնակցություն ▪ Քաղաքը Հին Գորիսին կապող նոր ենթակառուցվածքի կառուցում ▪ Քաղաքային իշխանությունների քաղաքական կամք ▪ Բազմաթիվ միջազգային ու տարածաշրջանային ծրագրերում ներգրավվածություն ▪ Օդանավակայանի առկայություն քաղաքում ▪ Համայնքների խոշորացում ▪ Չքոսաշրջային ծրագրերի մշակում ▪ Տեղական փառատոների կազմակերպում ▪ Չարգացման հնարավորությունների քաղաքի հատակագծային կառուցվածքում (լքված արտադրական տարածքներ) ▪ Բանկերի և դրանց հնարավոր ֆինանսավորման առկայություն 	<ul style="list-style-type: none"> ▪ Բարոյապես ու ֆիզիկապես մաշված խորհրդային բնակարանային ֆոնդ ▪ Ապագայում քաղաքը շրջանցող նոր մայրուղու կառուցում ▪ Վարարակն գետի սանիտարական վիճակ՝ կապված ապօրինի աղբաթափմամբ ▪ Բնակչության նվազում (միգրացիա)
---	--

2.2 Բացահայտված հիմնախնդիրները

ՏՃԽ-ների համատեղ ընտրած վեց հիմնական թեմաների շուրջ կազմակերպվել են նպատակային կլոր-սեղան քննարկումներ՝ օգտագործելով մտքային գրոհի եղանակը: Քննարկումների արդյունքում առանձնացվել են ներքոհիշյալ հինգ հիմնախնդիրները.

1. Քաղաքի և պոտենցիալ խոշորացման ենթակա տարածքի զարգացման հստակ պլանի բացակայություն, ինչպես նաև դրանից բխող կանոնակարգի անհրաժեշտություն, բացառելու համար սուբյեկտիվ ու անհատական որոշումների ընդունումն ու թուլյությունների տրամադրումը

Չարգացման այս փուլում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում պատրաստ չէ ապակենտրոնացման հետագա խորացմանը, որն առաջին հերթին ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրում³: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածության բարձր աստիճանն է, փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքների գերակշռող թվով: Մեր հանրապետության 915 համայնքներից 442-ը կամ 48 տոկոսը ունեն 1'000-ից պակաս բնակչություն: Հանրապետության 866 գյուղական համայնքներից 197-ը կամ ընդհանուրի 22,7 տոկոսը ունեն մինչև 300 բնակիչ, 75-ը կամ ընդհանուրի 8,6 տոկոսը՝ 301-500 բնակիչ, 168-ը կամ 19,3 տոկոսը՝ 501-1'000 բնակիչ: Գորիսը անմասն չի մնա խոշորացման այս ծրագրից՝ միավորվելով Ակներ, Վերիշեն, Քարահունջ համայնքների հետ: Սա բնականաբար առավելություններ ու միաժամանակ խնդիրներ առաջ կբերի:

³ Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, 2011 https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/qax44-18_1.pdf

Գորիս քաղաքի պատմամշակութային պոստենցիալի ոչ լրիվ օգտագործման կապակցությամբ, ղեկավարվելով «Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման մասին» ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 10-ի N 973-Ն որոշման 3-րդ կետի պահանջներով, ՀՀ մշակույթի նախարարության հանձնարարությամբ վերջինիս «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ում մշակվեց «Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի և քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման և օգտագործման հայեցակարգը»: Փաստաթղթի կազմման համար հիմք է հանդիսացել Հայնախագիծ ԲԲԸ-ի կողմից մշակված «Գորիս քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը»: Սակայն քննարկումների արդյունքում բացահայտվեց որ-դրա հիման վրա մշակվող կանոնակարգի առկայությունը զգալիորեն կնպաստեր պատասխանել բոլոր հարցերին և կանոնակարգել պատմական կենտրոնում կառուցապատումները: Խնդիրը լուծում է գոտիավորման նախագիծը, իսկ պետությունը երկու գործիք ունի այս խնդիրներին լուծում տալու համար՝ հողային քաղաքականություն և թույլտվությունների քաղաքականություն:

Ավելին, ՏՇԽ-ը բազմաթիվ մտահոգություններ առաջ բերեց, մասնավորապես.

- Որակյալ քաղաքային զարգացման ծրագրերի բացակայություն, չնայած նրան, որ քաղաքում մեծ ներուժ և պատրաստակամություն կա, և կան բոլոր նախադրյալները զարգացում ապահովելու համար:
- Շինարարական թույլտվությունները տրվում են կամ ավագանու, կամ համայնքի ղեկավարի կողմից:
- Շինարարական արգելքներ՝ առանց հիմնավորումների:
- Մշակված քաղաքականությունները մնում են թղթի վրա:

ՏՇԽ բոլոր անդամները համակարծիք էին, որ քաղաքաշինական կանոնակարգի բացակայությունը լուրջ հիմնախնդիր է: Քաղաքին քաղաքաշինական կանոնակարգ է անհրաժեշտ, որի պատասխանատուն կլինի քաղաքաշինության բաժինը և որտեղ հստակ նշված կլինեն, օրինակ, շենքերի թույլատրելի բարձրությունը, գովազդային ցուցանակների ձևը, բովանդակությունը, մայթերի ձևը և չափը, որոնք սահմանված են գոտևորման նախագծում, սակայն հաճախ խախտվում են ինչ-ինչ պատճառներով: Կանոնակարգը պետք է մշակվի ոչ միայն համայնքի ջանքերով, այլև բոլոր շահագրգիռ կողմերի:

Հասարակական ակտիվության և կոնսուլիդացիայի պայմաններում հնարավոր կլինի արված գործերը տեսանելի դարձնել: Բացի այդ, յուրաքանչյուր նախաձեռնություն սկսելուց առաջ պետք է հասկանալ՝ որտեղից ենք եկել, հիմա որտեղ ենք և ուր ենք գնում: Անհրաժեշտ է շատ լավ իմանալ պատմությունը:

2. Զբոսաշրջությունը հայտարարված է որպես քաղաքի զարգացման գերակա ուղղություն՝ առանց հստակ քաղաքականության և բազմաթիվ խոչընդոտներով

Թե պետական մակարդակով, թե քաղաքային իշխանությունների կողմից հստակ գիտակցված է, որ զբոսաշրջությունը քաղաքի զարգացման հիմնական ուղղությունն ու շարժիչ ուժն է, սակայն սա բավարար չէ շոշափելի արդյունքների հասնելու համար, քանզի թերի կողմերն այստեղ բազմաթիվ են.

Ունենք պատմամշակութային ռեսուրսներ, սակայն դրանք ի ցույց դնելու խնդիր ունենք:

Քաղաքը կարիք ունի իմիջի բարձրացման, ինչը կտանի զբոսաշրջությունի զարգացման և ներդրումների աճին:

Տարածաշրջանում հստակեցված չեն հյուրասիրության և բիզնես անելու սահմանները:

Զբոսաշրջությանը սպասարկող ոլորտները թերզարգացած են: -Զբոսաշրջության զարգացումը ենթադրում է նաև սննդին կետերի, ժամանցի վայրերի, հուշանվերների խանութների առկայություն: Եղած հյուրանոցները, սենյակները բավարարում են զբոսաշրջիկներին:

Քաղաքը կարիք ունի մի երրորդ տուրիստական կետի: -Վերջինս կարող է լինել, օրինակ, դեպի Որոտան ճանապահին, քանի որ Խնձորեսկի կամուրջը և Տաթևի ճոպանուղին թեպետ տարան զբոսաշրջիկների աճին, սակայն երրորդ նմանատիպ ենթակառուցվածք ստեղծելու անհրաժեշտություն կա:

Մեծացված է ենթակառուցվածքների դերը: -ճոպանուղին և կամուրջը ենթակառուցվածքներ են, որոնք ուղղություն են տալիս դեպի ժամանակության վայրեր: Սակայն ավելի շատ մեծացված է ենթակառուցվածքի դերը: Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է նոր ուղղություններ վերհանել զբոսաշրջիկին քաղաքում շատ ավելի երկար պահելու համար:

Գորիսը պետք է նայել զբոսաշրջիկի աչքերով: -Պետք է հասկանալ թե վերակառուցելուց հետո ինչ ենք ուզում ստանալ` հին քաղաք, նոր քաղաք, կարմիր տանիքներով քաղաք, քարանձավներով քաղաք, հստակ կողմնորոշում է պետք:

Վերը թվարկվածներից գատ ոլորտում առկա է մի կարևորագույն խոչընդոտ` զբոսաշրջության սեզոնայնությունը: ՏՃԽ անդամները խնդիրը լուծելու բազմաթիվ տարբերակներ առաջարկեցին.

- Գորիսը լավագույն վայրն է ՄՊԱ-ի համար: Վերջինս թույլ կտա հաղթահարել զբոսաշրջության սեզոնայնությունը և հյուրեր ներգրավել նաև ռուսական շուկայից: (Շահեն Չեյթունցյան)
- Լեռնադահուկային սպորտի զարգացումը թույլ կտա ձմռանը տուրիստներ ընդունել: (Արուս Յայրապետյան)
- Սառույցի առկայությունը դժվարացնում է ձմռանը քաղաքում տեղաշարժվելը: Հաստատուն ձյան բացակայությունը թույլ չի տալիս զարգացնել Լեռնադահուկային սպորտը: (Շահեն Չեյթունցյան)
- Ձմռանը փառատոնների, համերգների կազմակերպման միջոցով կարելի է տուրիստների ներհոսք ապահովել: (Տիգրան Բարխուդարյան)
- Պետական մակարդակով մշակութային միջոցառումները կարող են զբոսաշրջիկներին տարածել քաղաքով մեկ: (Գայանե Մարտիրոսյան)
- Տաթև-Գորիս ճանապարհի բարեկարգումը, Գորիս ուղղություն ցույց տվող ցուցանակների տեղադրումը Տաթևից զբոսաշրջիկներին հետ կբերի Գորիս: (Շահեն Չեյթունցյան)
- Գորիսը տոմսով անվճար ծառայությունների տրամադրումը Գորիսում (օր.՝ մեկ գիշեր հյուրանոցում) զբոսաշրջիկին Տաթևից կբերի Գորիս: (Սարհատ Պետրոսյան)
- Կղմինդրի արտադրության վերականգնում, արհեստագործության ակտիվացում և ցուցադրություն: (Ժիրայր Մարտիրոսյան)

3. Քաղաքի առկա շարժման համակարգը կարիք ունի զարգացման, ինչպես նաև ինտեգրման Հին Գորիս պատմական թաղամասի հետ, հատկապես զարգացնելով անվավոր միջոցների շարժման համար նախատեսված երթուղիներ

Այս ուղղությամբ առկա հիմնախնդիրներից մեկը այն է, որ Գորիսը շուտով կհայտնվի ճանապարհային լուսանցքում: Վարդենիսի ճանապարհի և Յուսիս-Հարավ ավտոճանապարհի կառուցումից հետո ճանապարհի ուղղությամբ աշխատող տնտեսվարողները կտուժեն: Անհրաժեշտ է նրանց նախապատրաստել այս ցնցումին:

Հաջորդ խնդիրը վերաբերում է քաղաքի պատմական կենտրոնի և Հին Գորիս բնակատեղու միջև կապի, ենթակառուցվածքի բացակայությանը: Բացի այդ, պատմական թաղամաս տանող ճանապարհը կարիք ունի բարեկարգման ու սալիկապատման, իրականացված լուսավորությունը դեռևս բավարար չէ:

Մայրերի բացակայությունը, համայնքային ծառայությունների մասին բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը, այն որ երթուղու փոխվելու դեպքում բնակչությունը դրա մասին տեղյակ չի լինում, միջամայնքային տրանսպորտը ևս լուրջ հիմնախնդիրներ են:

Անկասկած, փողոցային ցանցի կարգավորումը կտանի տրանսպորտի կարգավորման: Քաղաքին պետք է մեկ երթուղի հինգից վեց ավտոբուսով, որը կաշխատի շրջանաձև սխեմայով: Բացի այդ, տրանսպորտը պետք է նաև հետաքրքիր լինի: Չբոսաշրջային հավակնություններ քաղաքում, օրինակ, զբոսաշրջային բաց ավտոբուսներ կամ ֆայտոններ կարող են լինել:

4. Աղբահանություն, Վարարակն գետի բնապահպանական վիճակ, անօրինական աղբավայրեր, բարեկարգում

Քաղաքի զարգացման ընթացքում կարևոր է հաշվի առնել պատմամշակութային արժեքներն ու բնապահպանական խնդիրները: Քաղաքը այս պահին աղբահանության լուրջ խնդիր ունի` պայմանավորված մի շարք հանգամանքներով.

- Բաց մեքենաներով աղբահանություն:

- 2. Գլխավոր աղբավայրի և քաղաքի մոտ լինելը: Շները աղբը տեղափոխում են քաղաք, պետք է լուծվի քաղաքի գլխավոր աղբավայրի խնդիրը:
- 3. Աղբ թախելու մշակույթի բացակայություն:-Քաղաքում չի կատարվում աղբի տեսակավորում, մինչդեռ դա թույլ կտար քիչ աղբ գոյացնել:
- Գետափնյա թաղամասի աղբահանություն:-Թաղամասում աղբը լցվում է անմիջապես Վարարակն գետի մեջ, չնայած նրան, որ մոտակայքում բազմաթիվ աղբամաններ կան:
- ՏՃԽ-ը քաղաքի բարեկարգման մի քանի սցենար է առաջադրում.
- Քաղաքում գործունեություն ծավալող ընկերությունները պետք է վճարեն քաղաքի բարեկարգման համար:
- Քաղաքապետարանը չի կարող պարտադրել մաքրել, բարեկարգել հանրային տարածքները: Սա կարող է արվել բանավոր զգուշացումների ձևով, գործընթացը օրենսդրորեն չի կարգավորվում:
- Քաղաքի մայրերը զբաղեցված են: Եթե դա կրում է մշտական կամ երկարաժամկետ բնույթ, քաղաքապետարանը վճարներ պետք է սահմանի դրա վրա:

5. Գլխավոր հրապարակը, երկու զբոսայգիները չեն հանդիսանում համաքաղաքային ժամանցի վայր, որի պատճառ են հանդիսանում վարչական շինություններն ու դրանց հարող արտադրական մակերեսները և տեղափոխվող բանտի համալիրը

Պատմական կենտրոնում կան բազմաթիվ չբնակեցված, կիսակառույց շենքեր, խորհրդային տարիներից առկա բարոյապես ու ֆիզիկապես մաշված բնակֆոնդ, որոնք խաթարում են պատմական միջավայրն ու բարձր դիտակետերից քաղաք բացվող տեսարանը (5-րդ ճակատ)

Խորհրդային շրջանի ժառանգությունը նույնպես պետք է հաշվի առնել: Միայն պատմական ժառանգությունը չէ, որ ձևավորում է քաղաքի դիմագիծը: Բացի այդ, քաղաքի դեմքը հանդիսացող կոլորիտային պատշգամբները գտնվում են վատ վիճակում:

Քաղաքում առկա է նաև հանրային տարածքների սակավության խնդիր, քանի որ վերջիններիս մեծ մասը սեփականաշնորհված է:

Թեպետ քաղաքի գլխավոր ճարտարապետը համամիտ է, որ քաղաքի նորակառույց հրապարակում կա կանաչապատման խնդիր, սակայն ներկայացվեց, որ վերջինս հենց վարչական հրապարակ է, հանգստյան պուրակ չէ, մինչդեռ հրապարակի ուղղությամբ մտահոգությունները բազմաթիվ են.

1. Հրապարակի լուսավորություն: -Հատկապես դատարկ ժամանակ հրապարակը տգեղ է նայվում, լուսամփոփները գեղեցիկ չեն, լուսավորությունը չափից ավելի շատ:
2. Անհրաժեշտ է լրացուցիչ երկրորդ հրապարակ, որը կարող է ծառայել որպես հանգստյան գոտի:
3. Գրիգոր Տաթևացու արձանը գտնվում է հրապարակի կենտրոնում, մինչդեռ Տաթևացին Գորիսի հետ որևէ կապ չունի, արձանի անհրաժեշտությունը չկա հրապարակում:
4. Հրապարակը կարող է լինել ներկայացուցչական` խաչքարերով, որոնք կարելի է տեղադրել պատվանդանների ու կանաչի վրա: Կարելի է կազմակերպել քանդակագործների աշխատանքների ցուցահանդես: Փոքր ծառեր կարող են տնկվել կամ ոչ բերքատու թթի ծառեր, քանզի թույլը Գորիսի բրենդն է:

Բանտի ու զորանոցի առկայությունը քաղաքում որոշներին ընդհանրապես չի խանգարում, որոշներն էլ բանտի ճակատագրի շուրջ հետաքրքիր առաջարկներ ունենին, ինչպես օրինակ, բանտը դիտարկել որպես հյուրանոց, իսկ բանտախցերը կարող են ծառայել որպես սենյակներ: Չորանոցը կարելի է դարձնել հայրենասերների հավաքատեղի: Չբոսաշրջության զարգացման տեսանկյունից այս երկուսն էլ շահեկան են: Կարծիք հնչեց, որ քաղաքում զորանոցի առկայությունը շատ ավելի է խանգարում, քան գաղութինը: Սովորական մարդու համար զորքի առկայությունը քաղաքում և զորանոցի արտաքին տեսքը, պատերի գույնը վանում է:

Արտադրական շինությունների շուրջ ՏՃԽ անդամները տարակարծիք էին: Տարբերակներից մեկը այն էր որ արտադրական շինությունները կարելի է վերափոխել բնակելի տների կամ համալսարանների, սա միջազգային պրակտիկայում ընդունված ձև է: Սա կարող է քաղաքի

կենտրոնական հատվածում կյանքն ակտիվացնել: Մյուս տարբերակն էլ այն է, որ արտադրական շինությունները վաղ թե ուշ պետք է քանդել:

Քաղաքում վաղուց արդեն մասնավոր սեփականատերերի հետ բանակցություններ պետք է վարել կիսակառույցների ֆունկցիան փոխելու համար: Օրինակ, Օրբելյանների փողոցի վրա կիսակառույցը տարիներ շարունակ փչացնում է քաղաքի տեսքը: Այն վերածվել է աղբանոցի, մինչդեռ կարող է ծառայել որպես բանկ, խանութ կամ սննդի կետ:

2.3 Համընդհանուր տեսլական

Գորիսի քաղաքային համայնքի արժեքավոր պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնական ուղին, նկատառում է բոլոր ռեսուրսների (կրթական, մշակութային, բնական, բուժական և այլն) ռացիոնալ օգտագործումը՝ կողմնորոշվելով հիմնականում գեղագիտական արժեքավոր միջավայրի վերաստեղծմանը՝ փախկապակցված շրջակա բնական լանդշաֆտի և գոյություն ունեցող տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների հետագա կատարելագործման հետ:

Գորիսը կվեռածի ստեղծագործական հանգույցի՝ ժառանգության վրա հիմնված զարգացման համար իր մշակութային ռեսուրսների, ժառանգության միջոցով, ինչպիսիք են ավանդական ճարտարապետությունը, եզակի քաղաքային միջավայրի և յուրահատուկ պատմական քաղաքի ու այլ պատմական վայրերի, լանդշաֆտի և ոչ նյութական ժառանգության: Ժառանգության վրա հիմնված ռազմավարության մշակումը՝ նպատակաուղղված պատմական քաղաքի կենտրոնի վերականգնման վրա, կարող է խթան հանդիսանալ զբոսաշրջության և տնտեսական զարգացման համար: Պատմական կենտրոնի արդիականացումը կամբողջականացնի քաղաքային համալիրների և լանդշաֆտների գրավչությունը, հանրային տարածքների և ենթակառուցվածքների արդիականացումը կնպաստի բնակության և աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովմանը՝ խթանելով քաղաքի կայուն հավասարակշռված զարգացումը և պահպանելով կորստից առկա պատմաճարտարապետական բարձրարժեք շինությունները:

Քաղաքի՝ որպես տարածաշրջանային մշակութային կենտրոնի վերաճումը կնպաստի.

- ՀՀ զբոսաշրջային քաղաքականության ռազմավարական ուղղությունների իրականացմանը հետևյալ երթուղիներով. Երևան-Եղեգնաձոր-Սիսիան-Գորիս-Արցախ, Երևան-Եղեգնաձոր-Սիսիան-Գորիս-Կապան-Մեղրի-Պարսկաստան, Սևանի ավազան-Սելիմի լեռնանցք-Գորիս-Արցախ և երկրորդ ճյուղը՝ Գորիս-Կապան-Մեղրի-Պարսկաստան: վերը նշված երթուղիներից Գորիսից կճյուղավորվեն՝ Խոտ-Շինուհայր-Հալիձոր-Սատանի կամուրջ-Տաթև-Արավուս ուղղությունները, որտեղ և կկազմակերպվեն միջանկյալ զբոսաշրջային հանգրվաններ: Երթուղիները կտարաբաժանվեն ըստ երթուղու բարդության աստիճանի՝ թեթև, միջին ծանրության, ծանր: Սա կհանգեցնի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կայուն զարգացմանը ևս:
- Նոր առողջարանների ստեղծմանը (հիմնականում Գորիս քաղաքում) կլիմայաբուժության ուղղվածությամբ:
- Տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտների (հիմնականում սպասարկման) կազմակերպմանը:
- Նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Կրթական մակարդակի բարձրացմանը:
- Բժշկական սպասարկման կատարելագործմանը:
- Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներմուծմանը:
- Տարածաշրջանի գյուղական բնակավայրերի խոշորացմանը:
- Գորիս քաղաքի պատմական կենտրոնի և դրա հետ հորինվածքային սերտ փոխկապակցվածության մեջ գտնվող քարանձավային բնակավայրի բարդ տեղանքի Էկոտիկ և ինքնատիպ կառուցապատման կարգավորմանն ու ռեկրեացիոն նպատակներով օգտագործելու ծրագրի մշակմանը:
- Բնակության համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորմանը:

